

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մարտ 25

Թիւ 88 — ԺԵ

هزارايداق غزوةسى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արտասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեմքեր ու դեպքեր
Ապրիլի նոթեր — Պատահանքներու հետ
Հօրան Թալլաս
Իսկային հասած (Վիպակ)
Զուկին սերը (Նորավիպ)
Ազգագրական (Ակնայ սովորութիւններ)
Իմ հանդիս (Բերքուած)

Բ. Պ.
ԹԵՆՈՂԻԿ
Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Ս. ԲԱՔԷԼԵԱՆ
Մ. ՅՈՎԱԼԷՓԵԱՆ

Ա. Լ.

40 փարա 40

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը ծախուի. 1. Գասըզիւղ, Արմեն ԷՅ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մաքիա, Կայարանին մօտ, ծխավաճառ Յարուքիւն Աղա Էժեհհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավաճառ Նեան աղա Օգուհեանի փոլ (նախկին ջրավաճառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավաճառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց,
Ասենեան եւ Զարդարեան գրատուններ. — 6. Բոլոր լրագրավաճառներուն փոլ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱԳԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի ՏԵՕՐԷՆՈՒԹԵԱՆ ղիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապիե հասցեսի Թիւ 61

1900

ԿԱՐԵԻՈՐ

Անոնք որ կը փախաքին նպաստաւոր
և շահաւէտ պայմաններով հողագոր-
ծութիւն ընել պէտք է փութան իրենց
տունն տեսակ մշակութեանց մէջ ար-
հեստական աղբերու կամ հանքային
պարարտեցուցիչներու գործածութիւ-
նը ի կիր առնուլ որ կենդանական աղ-
բէն աւելի խնայողական ըլլալով հան-
դերձ աւելի արդիւնաբեր են :

Առանց պարարտեցուցիչներու մշա-
լութիւն մը կը նմանի առանց իւղի
կանթեղի մը :

Ընդհանուր մթերանոց

Խ. ՆԱՇԻՏ

Քիւչիւք Պարնաթան խան Կ. Պոլիս .
Ուր ձրի կը տրուին ամէն ծանո-
թութիւնք և տեղեկութիւնք :

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ու շարունակ ըն գործարանի մարտիկն



Որ կը մրցիլ բոլոր կարի մե-
քնաճերուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ցերեպայացուցիչ

ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Քէօբրիւլի
խան, թիւ 3 :

Մասնաճիւղ. — Ղալաթիա, Պէոյլիւք Միւ-
լէթ խան, թիւ 33 :

Գնողներու համար վճարման ամէն տե-
սակ զիւրութիւններ :

ԱՌԵԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՐԱՐՈՒԵԱՆ

Վ. Ի ՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՐԱՔԱՆԱԿ ձՈՒ ՄԹԵՐԳ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պահճէ գաբու, ճէլալ պէյ խանի օսակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր պատ-
ուարժան ընթերցողներուն կը յանձնարա-
րենք սոյն վստահելի վաճառատունն, որ
երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիւր
մը գրաւած է, և ամէն տարի չի զլանար իր
թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտեցող :

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չզղը-
ջաք : — Վաճառատան մարգային ուշ գրէ՛ք :

ՀԱՁԱՐ ԵՒ ՄԷԿ ԾԱՂԻԿ

ՀՆՏԱՎԱՋԱՌԱՆՈՑ

Կ. Պոլիս, Զօրապետ խանի դէմ Քիւչիւք
Պարնաթան խան Թիւ 10

Ձեր հաճոյքի համար ընելիք մշա-
կութեանց մէջ ի թէ՛ յուսարար և վրայ
տալ չէք ուզեր ձեր գրամն ու աշխա-
տութիւնը, դիմեցէ՛ք վերոյիշեալ հետա-
վաճառանոցը ուր կը ծախուին երկրի
կլիմային յարմար ճշմարտապէս գե-
ղեցիկ ծաղիկներու եւ համեղ ու ար-
դիւնաշատ բանջարեղէններու հուն-
տեր, որոնց իսկութիւնն ու թար-
մութիւնն երաշխաւորեալ է :

Խիստ դիւրամասշտիլ գիներ

Սոյն վաճառատան մէջ կը ծախուին
նաեւ ամէն տեսակ մշակութեանց հա-
մար մասնաւոր գուտ քիմիական աղբեր :

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կրնայ
հայթայթել բոլոր վարժարաններու պէտք
ունեցած զասագիրքերը, և դա՛ւ յանձնարա-
րութեանց ճիշդ համաձայն : Ամէնէն մեծ
գեղջը կուտայ, առանց ո եւ է շահու ակն-
կալութեան : Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք .
— Միտ կանխիկ :

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական



Գ. Շրջան

1900 Մարտ 25

Թիւ 88 — ԺԵ

ԴԵՍՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ



Թէ՛ անհատական կեանքի մէջ երանելի՛ են այն կարգ մը մարդիկ որք, ի բնէ անկախ նկարագրի տէր, կանուխէն կրցած են իրենց համար հաստատուն վիճակ մը ստեղծել եւ կարօտ չմնալ ուրիշին, ո՛րքան եւս առաւել երանելի՛ են այն թեմեր ու վիճակներ, որք ինքնազարգացման շաւղին մէջ կանուխէն մտած, կրցած են իրենց համար ստեղծել ինքնութիւն մը եւ անկարօտ մնալ կեդրոնին: Եթէ կարելի է այսպէս ըսել, այդ կարգի վիճակները գրեթէ ազատագրուած են կեդրոնին տեսակ մը խնամակալութենէն, վասն զի Պատրիարքարանի կազմական օրէնքին ընձեռած վարչական դրութիւնը լաւ ըմբռնած եւ սկսած են իրենք զիրենք կառավարել կրթական, եկեղեցական ու

վարչական երրեակ տեսակէտով, առանց կարօտ մնալու կեդրոնին միջամտութեան: Այդ ինքնազարգացեալ գաւառներուն գլուխը կրնանք դասել Իզմիրի վիճակը, որ խիստ քիչ անգամ կամ բնաւ չի ցաւցներ Պատրիարքարանի գլուխը, գիտէ իր գործերն ի՛նք կարգադրել, վասն զի գիտէ նաեւ ճանչնալ մարդերն ու իրերը: Իզմիր, իր ընկերային բոլոր հաստատութիւններով, տեսակ մը Պոլիս է, զի ոչ մէկ բանով վար կը մնայ Պոլիսէն ու Պոլսեցիներէն: Աւելի ճիշտը խօսելով, Իզմիր, կա՛ր Իզմիրցին, աւելի լաւ կը ճանչնայ ու գիտէ Պոլիսը եւ Պոլսեցին քան Պոլիս կամ Պոլսեցին Իզմիրը: Իզմիրցին աւելի խոր գիտող է քան Պոլսեցին, աւելի կարուկ գործունէութիւն ունի, աւելի հնարիմաց ու հնարագէտ է: Թո՛ղ որ Իզմիրի Հայը անգլոյն միջադպրին վաճառականութեան մէջ առաջնակարգ դիրք մը բռնած է, անշո՛ւշա՛ իր բանուկ նաւահանգստին շնորհիւ, իր բնակակից Ժողովրդոց հետ բաղդատամբ եւս կրնայ պարծիլ իր կրթական ու բարեգործական հաստատութիւններով: Եթէ Պոլսեցին հազար հոգինոց հիւանդանոց մը ունի,

իզմիրցիին ալ ունի իր հարիւրաւորնոց Հիւսնդանոցը, որոյ հարիւրամեակը պիտի տօնէ իմօտոյ: Իզմիրցիին ունի նաեւ այն ընկերային ու մարդասիրական հաստատութիւններն որք քաղաքակրթութեան բարիքն են, ինչպէս Պոլիս ունի իրենները: Այս անձուկ տողերը չեն ներեր մեզ մանր զուգակիւ մ'ընել, հաստատելու համար թէ իզմիր նախանձելու բան մը չունի Պոլսոյ վրայ, եթէ երբեք համոզուելու համար այդպիսի զուգակիւ մը պէտք կ'այ: Ինչ որ զարմանալի կը թուի մեզ, սա' է թէ ամէն անոնք որ իրենց գրչին ծայրը մարմնով կ'զգան իզմիրի վրայ բան մը գրելու, իզմիրցիներուն օտարասիրութիւնը դրամագլուխ կ'ընեն, անոնց բարքերուն տգեղ կողմը միայն կը տեսնեն, կեղեւը կը քննեն առանց միջուկին թափանցելու: Իզմիրցիք օտարասէր են եղեր, որովհետեւ իրենց տուններուն մէջ յոյն սպասաւոր ու սպասուհի կը գործածեն եղեր, որովհետեւ իրենց տուններուն մէջ օտար լեզուներ կը խօսին եղեր: Ասանք ըսողները հազիւ մէկ երկու օր առիթ ունեցած են սակայն իզմիրի մէջ անցընելու, եւ մարդ կը զարմանայ թէ ինչպէ'ս մէկ երկու օրուան մէջ կրցած են ա'յսքան խորունկ թափանցել իզմիրի ընկերային կեանքին: Եթէ իզմիրցիին այսօր օտար սպասաւորներ կը գործածէ, պատճառն ա'յն չէ որ հայազգի սպասաւորներ ու սպասուհիներ կան, բայց ինք նախապատուութիւն կուտայ օտարին, այլ պատճառն ա'յն է որ հայազգի սպասաւորներ ու սպասուհիներ կը պակսին հոն: Եւ պէ'տք է որ պակսին, զի ինչո՞ւ համար Հայերը պատրաստ ասպարէզ մը համարին ծառայութիւնն, եւ սպասաւոր ու սպասուհի ըլլալ փութաքին փոխանակ ժիր մըշակներ, գործունի արհեստաւորուհիներ ըլլալու, ինչո՞ւ համար Հայերը նկուն բեռնակիրներ, մթերանոցներու դալկահար պահապաններ ըլլան, փոխանակ


ճարպիկ արհեստաւորներ ըլլալու: Եւ շնորհակալ պէտք է ըլլալ, եթէ այսօր իզմիրի մէջ հայ սպասաւորներուն թիւը պակսած է այս կամ այն պատճառաւ: Իսկ իզմիրի բոլոր բարեկիրթ ընտանիքներուն մէջ հայերէնը նոյնքան մաքուր կը խօսուի որքան յունարէնն եւ ուրիշ օտար լեզու մը: Եթէ իզմիրի մէջ կան ընտանիքներ որք նախապատուութիւն կուտան օտար լեզուներու, միթէ հոս ալ չկա՞ն այդպիսի ընտանիքներ: Ուշետոյ, իզմիրի համար անհրաժեշտ հարկ մ'է գիտնալ յունարէն լեզուն, քանի որ այդ լեզուն, երկրին տիրող լեզուն չափ, անհրաժեշտ է առեւտրական հրապարակին համար, եւ ասոր համար է որ իզմիրցիք իրենց մայրենի լեզուին չափ քաջ կը խօսին յունարէնը, յունական շեշտով: Վերջապէս, մեք, Պոլսեցիքս, առանց մեր աչքին չիւզն հանելու, չենք կրնար իրաւունք ունենալ խժեժելու մեր իզմիրի պատուական Հայերուն ո՛չ մէկ ընկերային բարքը, վասն զի ի վերջոյ անոնց ալ նոյնքան իրաւունք տուած կ'ըլլանք մերը խժեժելու, որ աւելի վերաւորելի կողմեր ունի:

* * *

Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան իբր քառասուն վիճակներէն կամ թեմերէն հազիւ տասն այսօր առաջնորդներով կը կառավարուին, մինչդեռ երեսունն առաջնորդական տեղապահներով, կամ քիչ մը աւելի փայլուն տիրազօսով, պատր. փոխանորդներով: Եւ է'ն ուշագրաւ պարագան սա' է՝ այն դաւառներն որ ամէնէն աւելի խնամքի կը կարօտին, եւ ամէնէն աւելի պէտք ունին փորձ եւ բանիբուն առաջնորդներու, կը կառավարուին այսօր տեղապահներով, որոցմէ ոմանք վարդապետ, այլք քահանայ: Առաջնորդ ունեցող դաւառներն են Իզմիր, Նիկոմիդիա, Ռոտոսթօ, Պրուսա, Կեսարիա, Երզնկա, Սըվազ, Խարբերդ, Արաբկիր, Պիլէճիք: Առաջնորդ. տեղա-


պահով կառավարուող գաւառներէն ոմանք, ինչպէս օրինակի համար Ամասիա, առաջնորդական ընտրելեաց ցանկ կը խնդրեն, բայց կրօն. ժողովը կը զլանայ զրկել իր մէկ նորահնար վարդապետութեան կրթնած, զոր չենք գիտեր ո՞ւսկից գտեր հաներ է: Առաջնորդական տեղապահ մը ա'նպատճառ երկուսարի պաշտօնավարելու է եղեր որ դաւառն իր առաջնորդն ընտրելու իրաւունք ունենայ, իբր թէ այդ գաւառ ա'նպատճառ պարտաւոր ըլլար իր տեղապահն առաջնորդ ընտրելու, իբր թէ չգիտնար թէ կեդրոնէն զրկուած եռանուն ցանկը լոկ թեւադրութիւն մ'է գիւրութեան համար, եւ իբր թէ այդ ցանկէն դուրս ընտրութիւն կատարելու իրաւունք ունեցած չըլլար: Կրօն. ժողովոյ այդ քննածին որոշում ա'չ միայն ո եւ է ի-

րական օգուտ չընծայեր, եւ օրինական հիմ չունի, այլեւ շատ մը գաւառներ կը զրկէ օրինաւոր առաջնորդներ ունենալէ: Ու յետոյ, ի՞նչ կողմնակալութիւն է այն, ինչո՞ւ էրզրումի խնդրած առաջնորդական ընտրելեաց ցանկը կը զրկուի, եւ Ամասիոյ խնդրածը կը զլացուի: Եւ ի՞նչ անուններ են այդ ցանկին մէջ դրուածները: Բոլոր փորձառու եպիսկոպոսները, բոլոր փորձառու վարդապետները կարծես կախակալուած են, եւ ասպարէզը մնացեր է նորերուն: Արդեօք անո՞ր համար որ առաջինները Պոլսոյ եկեղեցիներուն մէջ տեղաւորուեր են անխախտելի կերպով, երկրորդներն հոս հոն կը սլքտան, թէ անո՞ր համար որ առաջնորդութիւնն ալ երկուստարդացնել կ'ուզուի: Կրօն. ժողովոյ կողմէ բացատրութիւն մը չինիչ պիտի ըլլար: Բ. Պ.



Ա. Պ. ՐԻԼԻ ՆՕԹԵՐ

ՊԱՏՐԱՆԻՆԵՐՈՒՄ ՀԵՏ



ՏՄՄՓՈՓ մէկ վայրկենիս, հարցուցի կիանքիս ամէն մէկ մասունքին՝ որոնք անցեալին էին ալ, հարցուցի ա՜նոնց ինչ բան որ զժրախտ, ինչ բան որ ախտիւր ըրած էր զիս, ու նոյն պատասխանը առի, նո'յն պատասխանն անողոք:

—Վայելումի առաջին քայլիդ մէջ վնասէր իջանկութեանդ զիսակը՝ պատրանքներուդ պատանքովը ոլլուած: . .

Սարսափ մէկէն, Այս պատասխանը պողպատի հունչքն ունէր ու անոր ալ պաղը:

Այս հունչքն ու այս պաղը թոթուեցին զիս:

Որպէս զի վայելքէն վերջը գալիք վիշտովը չը վարակուիս, պէտք է եղեր ուրեմն ըզձալ, բայց ըլլա՛լ միայն, պէտք է համբաւիս անհաստեար ըլլալ եղեր սէրերուդ փըթթումին՝ հոստտելու կարօտիդ խառնելով վախ մը անոնց ընդ հուպ թռուկուն. պէտք է եղեր լեզու թափել իտէալիդ առջեւ, արծաթէ, յակինթէ բառերով ընդելուզել ազերսդ՝ չսպասելով որ վանկ մը, տա՛ն մը պատասխան տայ ան քեզի:

Ի՛նչ, ինչո՞ւս պէտք իմին այն ցուրտ, ցամաք կիանքը որով չէզոք ապրող մը պի-

տի դառնամ ու միայն խոտվքիս հուրքը պիտի տաքցնէ էութիւնս, մեկուսի, տմգոյն խոտվքիս: Ես ի՞նչ ընեմ այն հանդարտ, մեքենայ վիճակը որուն մէջ պիտի տեսնեմ իրականութեան հետ դեռ չի պատկուած կոյս յոյսերուս պառլիլը, յոյսերս՝ զոր երթալով հմայաթափ պիտի ընեն տարիքոտ սպասումներ... Պատրանքը թող հասնի այն բողբոջին ուր ես երջանկութիւնս կ'ըմպէի եւ ուր հողիս անձանօթ սէրերու բոյրովը կ'արուշեմ: Թող հասնի՝ կ'ըսեմ, պատրանքը այն բողբոջին ուր երազներս պագ կ'առնէին ինձմէ եւ իսէալս իր բարձունքէն վար լնած՝ կը մերկանար գաղտնիքէն:

Սրուակին մէջ վճիտ անուշ ջուրը կը ննջէ. կը լալիլիմ ծարաւն. անոր քով կ'սպասէ բիւրեղ գաւաթը բերանաբաց: Մատներուս մէջ կ'առնեմ չիլին վիզը ու կըտուցը ծոկով գաւաթին շրթանց՝ կլա՛ք, կլա՛ք, կլա՛ք... կը լեցնեմ զայն: Ի՞նչ, չը խմե՛մ հիմայ՝ անոր համար որ մարտողութիւնս թերեւս խանդարէ: Բայց ջուրին ծորքին ղուարթ շառաչը պատուքս մեղմելու տեղ սնդամ մը աւելի՛ բոց տուած է անոր:

Ինձի լոխն թէ ժուկակութիւնը բարիքն էր կուտայ մարդուս: Բայց ո՛ւշը մնացած լարիքներ, պատասխանեցի անոնց:

Սիրտին անձուկը եւ հոգիին տաղտուկը կը սղմն սա երկու բառերուն մէջ, Ո՛ւշը մնացած...

Նախամեծար ի՞նչպէս չի սեպեմ ես այն պատրանքները նորէն որոնք, գիտեմ, ըմբոշխնումիս յաջորդին պիտի: Յնորքներուս ամէ՛նքը պիտի ինձ խօսին վերջէն, սակայն, հրապոյրը թող հաճոյքներուս...

Հին երջանկութիւններու մահէն յետոյ միտքս նո՛րը պիտի սաղմնէ, պիտի նո՛րը ծնի նորէն:

Չը գիտեմ ի՞նչ գիտումով ըսուած, բայց հոս իր կիրարկումը ա՛յնքան պատեհ՝ կը յիշեմ Ս. Գիրքէն սա գրուազը զոր, ափսո՛ս, փոսին գլուխը անցած կը կարգայ տէրաէրը, պսակի առթիւ կարգալու տեղ. «Յանկութիւնն անցանէ, եւ որդն ո՛չ մեռանի»:

Բաղձանքներուս հրայրքը, այո՛, կը մա-

րի, հաճոյք նկատած բողբոջիս վայելքնեւրուս համար «ձը՛գ, չա՛րժիր եղեր» կը թափին շրթունքէս, չլացքս կ'աղօտի ու հիասթափ կ'ըլլամ. բայց կուզայ վերջապէս այն պահը ուր կը ներզգամ նոր յոյսի մը պաղպաղը՝ երեւակայութեանս աւուած եթերին վրայ: Վիշտերուս վիճը որ պեղուած էր ներսս՝ կը փակուի այսպէս, որովհետեւ աւելի երջանկութիւններուս դեռ եւս տաք ածխներուն վրայ թխած եմ տենջանքիս ձուն, կեանքստ, Ժպտուն ու թարմ...

Եւ ահա ան չեմ, հինը մոռցուած է, բոլորովին մոռցուած, իւր թէ ուրիշ մըլլար զայն ապրողը, մինչեւ որ պատրանքը գայ նորէն իր կարգին լղբճել ամբողջ հմայքը այս նոր երջանկութեանս ալ:

Յաւիտենական կրկնութիւնը կեանքի երեւոյթներուն, նոր ցնծում ու նոր ցաւ կա՞ն մի արդէն, ամէնքն ալ հինը, ու հինին հաւատարիմ քաղուածքը միշտ...

Միակերպ այս հոլովումներուն մէջ, իղձերէ այրի մնալէս յետոյ, երբ վիշտը սկսած է կամաց կամաց ազօս փորել զէմքիս վրայ, ո՛րչափ կը սիրեմ ցնորքներուս հետ կենակցիլ ալ. միտքս ո՛րչափ կը սիրէ անոնցմով զբաղիլ որոնց մէջ անցեալ խինդերս ու տրտմութիւններս կը խորդան: Անոնց ամէն մէկին մէջ կ'երեւանն էջերը հին տարփանքներուս զոր ձեռքովս պատուեցի, զոր պատանութեանս խօլ անդթութեամբ խանձեցի, հի՛ն յոյզերս ու հի՛ն տառապանքներս զոր ես ստեղծած էի՝ ես կրկնու համար, հաճոյքներս՝ որոնք ինձի գիշեր բարի չըսած՝ լոյսէն խաւար փախած դաղած էին: Բոլորը, բոլորը:

Սիրտս շիրիմն է անոնց, ու բան մը դեռ կուլայ, կ'աղթէ դեռ հոն՝ անոնց հոգուն...

Երբեմն, ձանձրոյթի զորչ ցանցին մէջ կաշկանդ՝ կը փորձուիմ նայիլ զէպի առաջ, ապագայիս որ կը հեւայ տարակոյսի քողին տակ:

Կը քթթեմ աչքերս, մինչեւ որ յոգնին անոնք ու գոցուին:

Կը նայիմ հիմայ զէպի ետի: Միտքս—հիւանդ ճամբորդ—կը սղքտըկայ ապրած կեանքիս ուղիներուն մէջ... նա՛, դէմս է, ար-

ձան, մամիա, ամբողջ բոլոր երբեմնի երջանկութիւններուս :

Հոյսէ կէտեր կ'անցնին հոնկէ, ամառ զիջերուան մէջ թեւածող փոսուռաներու պէս անձայն անշնչուկ... : Իրենց ցուրտ շողքը կը ցըտէ հոգիս :

Ի զո՛ւր կը փորձեմ մրափել : Գանկիս տակ մղձաւանջներու լլկանքը կայ : Կեռ :

Պատուհանս բաց է : Հոլը կը բերէ ինծի մօտի եղալւորներու գէջ ծոցէն՝ զորահրու կոկոսը սո՛ւր, դանդա՛ղ, երկարաձգուա՛ծ ու կեղերջի մը պէս տրամագին...

Պաշարանքներուս երգն է տարկա՛ որուն ձայնը ցաւոտ օրօրի մը պէս կը խփէ աչքերս, քունին թեւերովը թռչելու անուրջներու այն աշխարհը ուր խոնջ, ծփանուտ միտքս պիտի դուլ առնու պահ մը...

Դանվիլի Պանամբուէսկեսի



ԼՕՐԱՆ ԹԱՅԼԱՏ

ԲՈՒՐՈՐՈՎԻՆ առանձնայատուկ առիթով մը բաղդը կ'ունենամ այս անգամ հոս յիշելու ֆրանսացի բանաստեղծը : Այդ առիթը կը շնորհուի ինծի իմ մէկ քանի թարգմանած այն սիրուն կտորներէն զոր գտած եմ Թայլատի առաջին երկերէն միոյն մէջ :

Բանաստեղծութիւններու հաւաքածոյ մը իր թարմ հասակին մէջ գրուած, և Թէօտոն տը Պանվիլի մասնաւոր յառաջարանով մը ներքողուած, կ'արժէ առանձին լուրջ ուշադրութեան առնուիլ մեր նոր գրողներու ա'յն դասակարգէն որուն կը պակսի պէտք եղած չընհայեցութիւնը, և որ առնօթին է նոր տպաւորութիւններու եւ նոր

գաղափարներու, ի՛նչ գրութեան տակ որ անոնք արտայայտուած ըլլան :

Թայլատի անունը քիչեր իմացած են թերեւս մեր մէջ, և երկիւղն ունիմ հաւատալու թէ այդ քիչերուն նայուածքէն խլրտած ըլլայ այդ անունը բոլոր պարզ անուններուն պէս, և սակայն Թայլատ իր առանձին տեղն ունի ֆրանսական գրականութեան պատմութեան մէջ :

Պանվիլի, Odes Funambulesques (որուն մասին Հիւլիօ հիացած ըրած է. Ո՛րքան իմաստութիւն այդ ծիծաղին, ո՛րքան իրաւունք այդ խօլութեան մէջ) հեղինակին յառաջարանը կը պատկերացնէ արդէն բուն խիստ արժէքը բանաստեղծին, ու կը խօսի մանաւանդ ա'յն նուրբ զգայնութեան վրայ որ Թայլատի ամէն մէկ տողէն կը բղխի, կը հմայէ ամէնէն սառ միտքերը ու իր ամէնէն մեծ յատկանիշը կ'ըլլայ զինքը ճշմարտապէս բանաստեղծ կոչելու համար :

* * *

Հոս ուղտիկ կարեւոր անդրադարձում մը կ'ունենամ ա'յն հայեցողութեան վրայ զոր ունեցան Պանվիլ ու իր հետեւողները՝ բանաստեղծութեան մէջ :

Բանաստեղծութիւնը, ուրիշ գրական ճիւղերուն նման, իր ազդեցութիւնն ունեցաւ դիտութենէն, և շատերը միայն արտաքին իրականութեամբ գրադեցան, զուտ զգայարաններուն օժանդակութեամբ կամ, ինչպէս կ'ըսեն, վկայութեամբ որ բացարձակ չէ՛ անշուշտ, եւ զգայարաններուն միջոցաւ մակերեւութային տեսողութիւն մը իր բոլոր կարծեցեալ մանրամասնութեամբն իսկ, չի կրնար վերջին վճռական աստիճանի մը հասնիլ, փիլիսոփայական տեսակէտով : Անանձն կարծուած հեղինակները, այսինքն անոնք որ չպիտի ուզէին բնաւ ենթակայական (subjectif) բան մը խառնել իրենց գրուածներուն մէջ, ու միայն անձէն դուրս, բոլորովին անկախ երեւակայութեան ոլորտներէն, արտաքինին փարիլ, բացարձակ ճշմարտութեան մը տենչը չեն կրնար գողացնել, որովհետեւ իրականութեան զննողութիւնը անձէ անձ իր առաւել կամ նը-

ուազ լայն շրջանակն ունի, և ասիկա արդէն իսկ բաւական է ապացուցանելու թէ որ եւ է հայեցողութիւնն որ բոլորովին առարկայական ու անանձն ըլլալու յաւակնութիւնը ունի, չի կրնար անձէն բոլորովին անկախ չարժիլ: Միթէ բնական չէ՞ ըսել թէ մեր ներքին աշխարհը անտեսելով, ուրանալով, մեր գոյութիւնն ալ անտեսած, ուրացած կ'ըլլանք, ինչ որ բացարձակ ապշութիւն է: Անոնք որ զգայարանքներուն վկայութիւններուն չափ կը հաւատան մըտքին վկայութիւններուն, այսինքն մեր համեմատաբար ա'յնքան անձուկ տեսութեանն անկախաբար առնուած ճշմարտութիւններուն, ամէնէն ճիշտ խորհողները կ'ըլլան, եւ կարծեցեալ իրապաշտը որ կը ջանայ զանց առնել իր ներսէն ամէն բան, ահագին անուրանալի զեղչ մը ըրած կ'ըլլայ եւ ծաղրելի ու սխալ կը դառնայ իրաւամբ ա'յն անունը որով կը յորջորջէ ինքզինքը, ու ընդհակառակը կը տրուի անիկա իսեպիսդ կոչուածներուն: Նոյն իսկ Գլոտ Պէռնա'րն է որ կը խօսի այսպէս. «Պէտք է զգուշանալ տարագրելէ գաղափարներու ու վարկածներու (hypothèse) կիրարկութիւնը...»: Ընդհակառակը մարդ կրնայ ազատ ասպարէզ տալ իր երեւակայութեան, այսինքն գաղափարն է որ սկզբնատար կը կազմէ ամէն մտածողութեան ու ամէն հնարողութեան, անո'ր է որ կը վայլէ ամէն նախաձեռնութիւն: Մարդ չի կրնար խեղդել զայն, ո'չ ալ վանել, առարկելով թէ ան կրնայ մնասել...»: Ինչ գեղեցիկ ու ինչ վսեմ անկեղծութիւն մեծ բնախօսի մը համար: Եթէ վարկածները վարկած կը մնան միշտ փորձին մէջ անյաջող, անկարելի, մտքին մէջ ա'յնքան վճիտ ու ա'յնքան բնական, պատճառն ա'յն է որ գիտութիւնը չի կրնար տալ իր վերջին բառը իրականութեան մասին: Եթէ միշտ պիտի սիրենք, իրականութեան ցրտութենէն հեռու, կապուած մնալ մեր երեւակայութեան թեւերուն, պատճառն այն է որ մեր մտքին աշխարհը իր գոյութեան ամենամեծ իրաւունքն ունի արտաքին աշխարհին չափ, քանի որ կ'զգանք զայն ինչպէս կը տեսնենք միւսը, եւ զգալուն ու տեսնելուն մէջ հոգեբանական տես-

սակէտով կարելի չէ տարբերութիւն մը նշանակել, եւ յետոյ, ինչպէս պիտի կրնայինք ուրանալ մեր երեւակայութեան կարեւորութիւնն ու ճշմարտութիւնը, քանի որ նոյնիսկ անիկա գործնականապէս ամէնէն մեծ օժանդակը եղած է գիտութեան հնարողութիւններուն, ինչպէս կը խոստովանի թէնտալ:

Բոլոր այս տեսակէտներով, Թայլատ ալ Պանվիլի ու անոր հետեւողութեան նման, իտէալիսդ մը եղած է:

* * *

Իր բանաստեղծութիւններու ա'յն հաւաքածոն զոր ասկէ քանի մը տարի առաջ առիթը ունեցած եմ կարդալու, ճշմարիտ հրապոյրը տուած է ինծի ներքինին հայեցողութեան, ու բոլոր այն տխուր ու զգայուն ներդաշնակութիւններուն որ ապրուած սրտէ մը դուրս խլրտած են բնականօրէն, առանց չափազանցութեան:

Սիրային բանաստեղծութիւնները մեծ տեղ մը կը գրաւեն անոր մէջ, բոլորովին մաքուր, անապակ սէր մը, որ առանձին կ'երազէ, կը խոկայ, կը դիտէ, կը տխրի: Յատկանշական տխրութիւն մ'ունի անիկա, յատկուկ երազուն մեղեդիով մը դուրս բերուած, որ միայն Թայլատինն է, ու Թայլատին սիրտը կ'որակէ, այնպիսի տխրութիւն մը որ իրիկուններու տարտամ, սահեցիկ ստուերներէն ծծուած թախծութեանը կը նմանի, երբ անոնք գիտեն հմայել, ու մեռած, մոխրացած յիշատակներ արթնցնել մեր մէջ, միեւնոյն ատեն անցնելու մօտ օրուան մը բոլոր տառապանքը ցրուելով մեր աչքին առջեւ: Ինչ որ դատապարտուած է անցնելու, թաղուելու անհունին ծոցը, իրիկուններու հանդարտ ծուէններուն կամ ջուրին գոգ խաղացող վերջին կոհակներուն չափ, սէրն է որ գինովցուցած է ատեն մը Թայլատը, զգուռ ու լայն սարսուռները, անուշ պրկումները, երջանիկ հոսանքները որ կը խաչաձեւուն սիրող հոգիին մէջ, բոլոր անճառ խորութիւնը որուն տակ կը հեւան երկու սէրեր: Ու այն ատեն, այդ ճակատագրային վաղանցիկութեան առջեւ, ինչ տխուր շեշտ մը կը դնէ անիկա իր եր-

օ՛... այս նամակը ինձի ուղղուած է եղեր, և դուն կը պատ-
ռե՛ս եղեր հա՞ ինձի վերաբերող նամակ մը...

Հեգնութեան լպիրշ ծիծաղով մը այս խօսքերը ըսելէն
ետքը սկսաւ անձայն աչքերը արագ արագ պտըտցունել
թուղթին վրայ:

Յիմի կեցած տեղէն կը նախազգար թէ այդ թուղթին
կտորուանքը իրեն համար աղէտք մը կը պատրաստէին ու
սիրտը պայթելու չափ ուժգին կը տրոփէր:

— Ինձի՛ նայէ, օրիորդ, ըսաւ յանկարծ մայրը՝ նախ մեղ-
մօրէն սկսելով ու հետզհետէ բորբոքելով համբակ դերասա-
նի մը կերպովը, կարդա՛մ սա նամակը, մտի՛կ ըրէ և հա-
կցիր թէ տակաւին որքա՛ն անվորձ ես եղեր, որքա՛ն բթա-
միտ, որքա՛ն ոչինչ, որքա՛ն... պզտիկ ու խեղճ գլխուդ
մէջէն ատանկ լկտի գաղափարներ անցունելու, և մինչև ի՞նչ
քու մօրդ յայտնել յանդգնելու համար... ո՞վ կ'ըլլաս կոր
դուն ատ լակոտին հետ ամուսնանալ մինչև ի՞նչ մտքէդ ան-
ցունել համարձակելու համար:

Յիմիին արցունքոտած աչքերը այս պահուն կարծես ը-
սել կ'ուզէին. «Գթութի՛ւն, մա՛յր, գթութի՛ւն, ես ըսի՞, ը-
սի՞ ես ատանկ բան»:

Բայց կարծես լեզուն բռնուած էր այդ քրքիլին և այս
իրեն ուղղուած անհաւատալի նախատինքնի լուծ մը, ու չ'ը
կրնար բառ մը արտասանել:

— Մտի՛կ ըրէ հիմա այս նամակը, կը խօսէր Լուսեա, որ
ատուածային հրաշալիք մըն է, մտի՛կ ըրէ, հասկցի՛ր ոչն-
չութիւնդ և դժձա՛, ցաւէ՛ ու լա՛ց ամբարտաւանի մը վըս-
տահութեամբ, գոռոզութեամբ, համարձակութեամբ զրեթէ
ըրած առաջարկութեանդ համար:

Ու, տեսնելով որ այդ քաջարի աղջիկը հիմա փետուրի
մը պէս կը դողար, գոհ՝ իր ազդու յառաջաբանին տպաւո-
րութենէն, պատրաստուեցաւ նամակին ընթերցումին:

Երկու թուղթերէ կը բաղկանար նամակը:

Նախ առաւ այն թուղթը՝ որ լրացուցիչն էր միւսին, և
որ գլխաւոր նամակն էր:

«Տիկի՛ն,

«Ներփակեալ նամակս շատոնց է ստացած եմ... շատ
«փորձեցի ինքզինքս՝ դայն ձեզի չղրկել՝ բարեկամի մը վըս-
տահութեան դէմ դեղձում մը ըրած չըլլալու համար: Բայց
«վերջապէս խորհեցայ որ ապշութիւն մըն էր ատանկ վատ
«մը դեռ. իմ բարեկամս կոչել, քանի որ ասկէ զատ, իմ
«լուրթեամբս ձեզի դարան լարող անձին չափ յանցաւոր ե-
«ղած պիտի ըլլայի կերպով մը անոր մեղսակիցը հանդիսա-
«նալով:

«Ուստի կը զրկեմ այսօր նամակը, լաւ գործ մը ըրած ըլ-
«լալու ներքին գոհունակութեամբ...: Միայն՝ սակայն՝ ձեզ-
«մէ պիտի խնդրէի ու նոյն իսկ երմնցունէի որ՝ պէտք եղած
«միջոցին դիմէիք, առանց այդ սրիկային ականջը ձգելու ձե-
«զի համար միայն բարեկամութիւն եղող այս գործը: Ձեր
«ինձի պարտած շնորհակալութիւնն ալ այս կերպով արդէն
«կատարուած պիտի ըլլայ»:

ԲԱՐԵԿԱՄ ՄԸ

Առանց մոռնալու ծուռ եւ յանդիմանալից նայուածք մը
նետել ամուսնոյն վրայ, որ դուռը բանալով սենեակէն
դուրս նետուած էր այն բոպէին իսկ՝ ուր նամակը սկսած էր
բարձրաձայն կարդալ՝ Լուսեա սկսաւ կարդալ գլխաւոր նա-
մակը, ամէն մէկ բառի վրայ ծանրանալով ու Յիմիի նայելով
որ զարհուրելի կերպով տոգունած էր եւ կը դողար սոս-
կալի վախով մը տպաւորութեամբ:

«Սիրելի՛ բարեկամս,

«Այս ժամուս ուրախութիւնս կատարեալ ըլլալու համար

ԹԵՐԹՕՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

1385

«բանի մը միայն կը կարօտիմ... ծանօթացնելու համար քե-
«գի ուրախութեանս պատճառը»

«Մինչեւ հիմա քեզմէ բան մը պահած չեմ եւ այս բանը
«երբեք անգաղտնապահութիւն չեմ նկատեր» քանի որ միշտ
«լիովի վստահութիւն ունեցած եմ գաղտնապահութեանդ
«վրայ»

«Գրեթէ ամիս մը առաջ Տիրանը զիս վիլլան տարաւ գի-
«շեր մը... Դանի մը ժամ տեսակցութիւն եւ... մնացեալը
«կրնաս գուշակել» ծանօթ ըլլալով քեզի դաշնակովս աղջիկ
«մը հրապուրելու տաղանդ» Արդարեւ — աւելորդ չէ՞ ը-
«սելը — աղջիկը վրաս կը խենդենայ կոր, Գիշերները ջղջիկի
«մը պէս կը շրջագայիմ վիլլաին բոլորտիքը, Մէյ մը Ֆիմիի
«սիրտը ամբողջովին գրաւեմ» ա՛լ անկէ անդին վստահ եմ
«թէ քանի մը հազար ոսկի փարայի մը պէս գրպանս պիտի
«մտնայ» Հայրը, մայրը ինձմէ շատ ախորժեցան. գործը
«դիւրացած է. թէեւ տակաւին անգամ մըն ալ չայցելեցի
«վիլլան» հակառակ մանաւանդ հօրը թախանձագին ստիպ-
«մանը. բայց, կը կարծեմ, այս բանը աւելի կ'արծարծէ աղ-
«ջկան սէրը... է՛հ, օր մըն ալ՝ երբ ալ վստահ ըլլամ թէ
«կապած եմ աղջկան սիրտը անքակտելի կապով մը՝ յանկարծ
«պիտի դադրիմ թափառելէ ան կողմերը... Յաջողելու լա-
«ւագոյն սխալէմն է այս...»

«Մնաս բարով, սիրելիս, ասանկ հազուագիւտ որս մըն
«ալ քեզի համար կը մաղթեմ».

Դոյդ

Վ. Ս. Հ. Է

Ի՞նչ զգաց Ֆիմի այս նամակին դէմ:

Նախ, սակայն, ինչո՞ւ հայրը սենեակէն դուրս ելաւ երբ
Լուսեա կարդալ սկսած էր զայն:

«— Չե՛մ սիրեր, կ'ըսէր ան, ու կ'արհամարհեմ ալ այն
արարածը որ ինձի «բարեկամութիւն» մը ըրած ըլլալու

այլ միմիայն, միմիայն, կ'ըսեմ, իտէալիս մարմնացումը...
Մա՛յր իմ, հա՛յր իմ, ահա ծունը կ'իջնամ ձեր ոտքերուն
առջեւ ու կը խնդրեմ, ստիպողաբար կը խնդրեմ որ գիշեր
մը հոս եկող երիտասարդը, որուն տաղանդին, որուն բար-
ձրութեան՝ Տիրանէն յետոյ՝ ամէն ձայն իմ մէջս վիշտութիւն
կուտայ, անասան հաւատք մը կազմել կուտայ, կը խնդրեմ
որ...

Անհոգի Լուսեա յանկարծ հրէշային քրքիջ մը արձակե-
լով, ա՛լ թող չտուաւ որ Ֆիմի շարունակէր իր խօսքը, թու-
նաւորելով, հարուածելով այդ ազնիւ յանդգնութիւնը որ
Ֆիմիի քով անակնկալ երեւոյթ մը ըլլալու համար հետզհե-
տէ սկսած էր ապշեցնել, զմայլեցնել, հմայել հայրը...

Լիբր ու բարձրագոյն այս քրքիջը կարծես կը թուէր
բնաւ չը դադրիլ, երբ յանկարծ այս պահուն ծառան սեն-
եակէն ներս չը մտնէր:

Ձեռքը նամակ մը ունէր ան՝ Ֆիմիի հօրը հասցէին, հայրը
առաւ նամակը. բացաւ ու սկսաւ անձայն կարդալ սրտագո-
ղի լուրթեան մը մէջ: Բայց հագիւ հագ քանի մը տող բան
կարդացած էր, և ահա դէմքը ահուելի կերպով այլայլեցաւ,
ձեռքերուն մէջ թուղթը կը թրթռար, սիրտը բուռն կեր-
պով կը տրոփէր և քիչ մը առաջուան իր սքանչացումի յու-
զումէն յառաջ եկած այտերուն թեթեւ կարմրութիւնը ան-
հետացաւ:

Վայրկեան մը ետքը նամակը աւարտած՝ զայն պատռե-
լու շարժում մ'ըրաւ. բայց Լուսեա որ ո՛չ նամակին եւ ոչ
իր վրայէն աչքերը չէր հեռացուցած, նշմարելով այդ շար-
ժումը, տեղէն ցատկեց յանկարծ, ու նամակը ձեռքերէն յա-
փշտակելով.

— Ինչո՞ւ, գոչեց, նամակը կը պատռես... Ի՞նչ նամակ է
նայիմ. իրաւունք չունիմ մի քեզի եկած գիր մը ես ալ կար-
դալու...

— Օ՛, ըրաւ յետոյ նամակին վրայ ակնարկ մը ձգելով,

ԹԵՐԹՕՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

1387

րեն : Այս նայուածքը չը տեսաւ կամ չուզեց տեսնել հայրը որ այս պահուն , սաստիկ տոգունած , անդին կը նայէր համ-
րիչը արագ արագ ոլորելու զբաղած :

Այն ատեն ա՛լ Ֆիմի վճռեց թէ իրօք հայրն ալ
այլեւս մօրը համամիտ եղած էր . հոգին սեղմուեցաւ , ամա-
յութիւն մը զգաց էութեանը մէջ եւ միայն իր քաջութիւնը
իրեն օգնութեան կանչելով .

— Մայր իմ , ըսաւ , խորտակուած ձայնով մը , հակառա-
կելով ձեր գաղափարներուն՝ ես պիտի ունենայի է՛ն մեծ
վիշտը , բայց որովհետեւ , մայր , խնդիրը իմ ամբողջ կեան-
քիս վրայ է... .

Այս «յանդուգն» պատասխանին ի լուր , Լուսեա քիչ մնաց
քրքիջ մը պիտի արձակէր ու՝

— Ֆիմի՛ , պիտի գոչէր , այդ զէվզէկին հետ ամուսնանա-
լու գաղափարը միտքէդ հանէ՛... .

Բայց տակաւին կրցաւ զսպել ինքզինքը ու ըսաւ .

— Է... . չարունակեցէք նայինք , ազնուուհի օրիորդ , ու
բացէ ի բաց ըսէք թէ ի՞նչ ըսել կ'ուզէք... . Ի՛նչ է տեսնեմ
գաղափարնիդ :

Այս անգութ հեգնութիւնը Ֆիմիի սիրտը շատ դառնա-
ցուց , բայց փոխանակ զինքը խորտեցնելու , աւելի քան եր-
բեք արձակեց իր լեզուին կապերը .

— Շնորհակալ եմ , մայր , ըսաւ անվեհեր ու խանդոտ կեր-
պարանքով մը , որ ինծի ազատութիւն կը շնորհէք , որպէս զի
խօսիմ . իմ ամէնէն մեծ փափաքս էր արդէն ձեզի ամէն ինչ
խոստովանիլ առանց իսկ հետապնդումի , բայց համարձակու-
թիւնս կը պահսէր ինձմէ : Այսօր սակայն , ա՛լ ամէն բան
զիս խօսելու կը հրաւիրէ . պիտի խօսիմ՝ եթէ մինչեւ իսկ
գիտնամ թէ անդունդ մը պիտի բանամ՝ ոտքերուս առ-
ջեւ... . Ներսս այրող իղձ մը ունիմ , տենջանք մը , իտէա՛լ
մը՝ որուն հասնիլ կ'ուզեմ : Ինծի համար պատիւը , փառքը ,
տիտղոսը , չի պիտի կրնայ տալ մեծահարուստ ամուսին մը ,

նպատակով՝ իմ բարեկամներէս միոյն «ինծի դէմ գաղտնի
նիւթած թշնամական արարքները» մատնանիչ կ'ընէ՝ յանձ-
նարարելով կամ աւելի գէշ՝ երմնցունելով որ մի՛ գուցէ եր-
թամ ու իր այդ ըրածին համար այդ «թշնամի»ն մեկնու-
թիւն պահանջեմ : Բարեկամական այս դրութիւնը չե՛մ ըմ-
բռներ ու չե՛մ չլանար երբե՛ք անոր փայփայող ու ազնուա-
բոյր երեւոյթէն : Ընդհակառակը կը կասկածիմ , եւ առանց
յարգելու յանձնարարուած գաղտնապահութիւնը , առաջին
գործս կ'ըլլայ խնդիրը լուսաւորել այդ «թշնամի»իս օժան-
դակութեամբը իսկ ։

Իր այս փորձառական սկզբունքը , որով գրեթէ միշտ
հաստատած էր որ այդ «բարեկամութիւն»ը պարզապէս թըշ-
նամութիւնն է եղեր՝ պիտի բաւէր որպէս զի հեգնոտ նայ-
ուածք մը նետէր այդ նամակին վրայ այսօր ալ : Ասկէ զատ
դիտող , կշռող , խորհող , դատող միտք մըն էր ան եւ ան-
խորհուրդ կերպով մէկուն մասին համոզում չէր գոյացներ իր
մէջը , օրին մէկն ալ անակնկալ երեւոյթէ մը ազդուելով ան-
կէ չհրաժարելու համար յանկարծ : Արդ , անգամ մը՝ որ գնա-
հատած էր Վահէն ու մեծ համարում եւ հաւատք կազմած
անոր մասին , ոչի՛նչ , այլեւս , չպիտի կրնար տատանեցնել
իր գաղափարները :

Ինչո՞ւ ուրեմն , իրերու այս վիճակին մէջ , սաստիկ այ-
լայլեցաւ նամակը կարդացած պահուն . տարակուսեցա՞ւ իր
սկզբունքին վրայ , իր համոզումներուն , ըմբռնումներուն
վրայ , վախցաւ որ սխա՞լ կերպով ճանչցած էր Վահէն :

Ո՛չ : Իր այլայլութեան պատճառը այն էր միայն որ քիչ
մը ետքը Ֆիմիի վիշտը նախատեսած էր . — Ա՛հ , ո՛րքան
պիտի տառապէր ան՝ Ֆիմին՝ իր «իտէալ»ին — որ անշուշտ
Վահէն իրեն կեանքի ընկեր ունենալն էր , — թունաւորուիլը ,
փճանալը տեսնալով դիւային թեւերով լարուած թուղթի
մը կտորովը : Եւ մտածում մը ունեցած էր . պատուե՛լ այդ
թունալից թուղթը , ջնջել , անհետացնել զայն : Բայց հա-

զիւ այս մտածումը նիւթաւորել պատրաստուած էր, և ահա ինչպէս տեսանք, Լուսեաի երկաթեայ ձեռքերը խլած էին զայն իր ձեռքերէն։ Այն ատեն, որպէս զի իր աչքերովը չը տեսնայ Ֆիմիի անխուսափելի ցաւերը, այդ չքնաղ, եղական կոյսին հոգիին գալարումները, դուրս ելած էր սենեակէն երբ ալ նամակին ընթերցումը սկսած էր Լուսեա։

Իր սկզբունքին համեմատ տունէն ալ դուրս պիտի ելլար Վահէի երթալ և անմիջապէս բոլորովին ճշգրտելու համար խնդիրը, երբ՝ նամակը բերող ծառան որ իր դուրս ելած միջոցին դրան քովը իր դէմը ելած էր, ետեւէն մինչեւ փողոցին դուռը իջնելով։

— Ինչո՞ւ աչքերնիդ արցունք լեցուեր է, էֆէնտի, հարցուցած էր դողդեղացող ձայնով մը ու դեփի դեղին կտրած։

Բայց, ըստ որում սաստիկ փղձկած ըլլալով առանց պատասխանելու դուռը կը բանար մեկնելու համար։

— Առանց համարձակութեան ձեզմէ պիտի աղաչէի, էֆէնտի, որ վայրկեան մը ինծի մտիկ ընելու շնորհքը ընէիք... կարելի է օգտակար ըլլամ ձեզի...

Ձարմացած և հետաքրքրուած, հոն կայնեցաւ ու ծառային երեսը նայիլ սկսաւ ապշութեամբ թէ ի՞նչ էր ըսածը ու ի՞նչ պիտի ըսէր։

— Որովհետեւ այսօր դրան ետին սպասել ստիպուած էի, իմացայ ամբողջովին ինչ խօսք որ եղաւ ներսը։ Հիմա ինծի անանկ կուգայ որ ձեզի վիշտ և արցունք պատճառող բանը պարզապէս ներս բերած նամակս եղաւ։

Խեղճ մարդուն արցունքները պաղեցան, չորցան տոգոյն աչքերուն մէջ՝ այս խօսքերուն ազդեցութեամբը, և շունչը բռնած՝ ապշութեան եւ երկիւղի արտայայտութեամբ մը սկըսաւ դուռը գոցել և մտիկ ընել։

— Ես գուշակեցի, երբ ներսի խօսակցութիւնը իմացայ, թէ բերելիք նամակս այդ խօսքերուն մէկ շարունակութիւնը պիտի ըլլար ու գէշ հետեւութիւն մը յառաջ պիտի բերէր։

մը, կրնամ գուշակել, կրնամ հասկնալ թէ որո՞նք են այն պատճառները որ կրնան քու տարիքդ ունեցող աղջկան մը մէջ կերպարանքի ու բնութեան ասանկ փոփոխութիւն մը մտցունել։ Քանի օրէ ի վեր քեզի խօսք մ'ունէի յայտնելիք, բայց եթէ լուռ կը մնայի կոր՝ աստիճան մը յարգած ըլլալու համար էր հօրդ առարկութիւնները։ Այսօր ինքն ալ այլեւս համոզուած է ատոնց որչափ անիրաւ ըլլալուն, քանի որ կ'ստիպէր զիս լուռ մնալ անանկ խնդրոյ մը յայտնութեան որ այնքան կենսական կարեւորութիւն ունի քեզի համար և որ քու երջանկութիւնդ, քու բարիքդ պիտի վճռէ։

Ու խօսելէ ետք այդ անտաշ սեղանաւորին «բարեմասնութիւններուն» վրայ։

— Երեւակայէ անգամ մը թէ ի՞նչ պատիւի պիտի տիրանաս ատանկ ամենահարուստ անձի մը կինը ըլլալով, և մենք ի՞նչ փառքերու պիտի հասնինք ատանկ մեծ անձնաւորութիւն մը մեզի փեսայ տեսնալով։ Մտածէ, Ֆիմի, թէ ես քու մայրդ եմ, դուն ալ իմ աղջիկս ես։ Հետեւաբար ինչ որ կ'ըսեմ, ինչ որ կ'ընեմ՝ խորհրդածելով, հեռատեսելով, փորձառութեամբ կ'ընեմ, քու երջանկութեանդ համար կ'ընեմ։ Ուստի երբեք բան մը առարկելու անխոհմտութիւնը պէտք չէ որ ունենաս այս սքանչելի առաջարկութեանս դէմ։

Կը կենար հոն Ֆիմի, վհատ դէմքի մը անբացատրելի արտայայտութիւնովը։ Պիտի ուզէր ան իր կամքին ամբողջ ազատութեամբը յայտնել ներսը եռացող զաղափարները եւ մայրը ետ կեցնել այդ մտադրութենէն։ Բայց չէր համարձակեր, որովհետեւ գիտէր թէ իր մայրը չէր սիրեր զինքը։

Այլ սակայն զօրավիգ ունենալով իրեն՝ մօրը պահ մը առջուան ըսած սա խօսքը. «յարգած ըլլալու համար հօրդ առարկութիւնները...» — Ուրեմն եղած էր որ հայրը համակարծիք չըլլար մօրը — այո՛, միայն այս ուժին ապաւինելով՝ սկսաւ հօրը նայիլ աղերսագին աչքերով, որպէս զի օգնէր ի-

գին մէջ, ու սկեպտիկ խորհողի մը սարսուռն տպաւորութիւնը կուտայ դիմացինին, թէեւ անիկա ջերմ փարող մ'ըլլայ իր խտեւիւն .

Եկեղեցւոյն դուռն յաւիտեան է ա'լ փակ, Սիրունիկ, մեր համբոյրներ հոն ա'լ չը կան: Բոյներու պէս ծածուկ՝ հիւսուած ճիւղի տակ, կարդացուեցան մեր հուսկ տաղեր սիրական:

Դուռն ա'լ չըսես պիտի բառեր ինձ մեղմին Զոր գիշերուան անհունին մէջ շուքն երկար Թրթռալ կուտար, որ խառնուած սուրբ խունկին կ'ելլէին վեր, սրահին մէջէն տխրաւառ:

Պիտի չգգամ խարտեաչ մազերդ ա'լ իշնալ Մատներու տակ, մշմունջին մէջ երգերուն, Ու պիտի հին պատերը մուծ լըռեն ա'լ, երբ ուղղուիմ դէպի իրենց շուքն անհուն:

Քեզ չը պիտի տեսնեմ դողող ու ժպտուն, երբ երկինքին մէջ շէկ՝ մեռնի ա'լ արեւ, Գիշերուան մէջ մտնել այն վայր սրբասուն Ուր դէպի վեր մեր սրտեր խօս կ'առնեն թեւ:

Մեր առաջին օրերու այս ցնորքն աղուոր, Որ Ապրիլի առտու մը դուրս բոյնէն թռաւ, Օր մը նորէն պիտի ծընի՞ երազն որ Մինչեւ վարդերն իսկ դեռ չապրած՝ շուտ մեռաւ:

Պիտի ծընի՞ օր մ'հողիս իր մոխրէն սառ, Ա'լ չը պիտի կրկնէ քաղցր իր մեղեդին, Եփենոսէ սեւ սնտուկին վրայ իսպառ. Դէ՛տր է դընել դրոշմն, հըրածեշտը յետին:

Ամէն սիրոյ բաղդը այսպէ՛ս է, աւա՛ղ, Տակաւ մեռնիլ իր երկինքին մէջ տարտամ. Քեզ անջատող ինձմէ՛ օրուան մը այս խաղ, Առանց բաղդին կոչման, դադրում մ'է միայն:

Երջանկութիւնն, այս՛, հոս բոյն չը դընեմ, Դուռն գիտես զայն, ու գոսկտիւսի ծաղիկն պէս, Ան լոկ անգամ մը կը բանայ իր թերթեր. Մեր սրտերուն մէջ, սե՛ւ ժայռեր վշտակէզ:

Մնա՛ս բարով, դո՛ւն որ եղար պահ մ'իմ հող-
[եակ,

Եւ զոր հիմայ կը տանի ծուփ մ'հեռաւոր... Եկեղեցւոյն դուռն յաւիտեան է ա'լ փակ, կարդացուեցան մեր հուսկ սէրերը աղուոր:

ԵՐԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

(Շար.)

ԶԱԽԿԻՆ ՍԵՐԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

(Շար. ԺԴ թիւէն եւ վերջ)

Ք

Ու իր անկուռը կը մօտենար: Օր մը տա-
րեւոր հարուստ էֆէնտի մը՝ Գուսարեան
Բարսեղ՝ որուն աջակցութեամբ կը դարձնէր
իր խանութը, յանկարծ եւ անակնունելի-
րէն վրայ հասնելով, հաշիւը պահանջեց ա-
նոր այնքա՛ն ատենուան դարձուածքին:
Ընկճուած զայրոյթ մը միայն ունեցաւ հէք
պարտականն, ու այս անթիւերորդ անգամն
ըլլալով՝ թերեւս փորձեց խաբել Բարսեղ
էֆէնտին, որովհետեւ խեղճը իր դրամա-
ղուխն իսկ վատնած՝ պիտի չկարենար պա-
հանջատէրին իրաւունքը վերադարձնել:
Բայց վաշխառուի արհեստին մէջ իր ամբողջ
կեանքն անցուցած մարդը, խարդախու-
թեան վարպետ մը դարձած, ա'լ պիտի
ուզէ՞ր խաբուիլ արդէն կիսովին փրած,
ցնորած այդ ախտավարակէն: Օ՛, դժուա՛ր:
Եւ մարդ բացարձակապէս միամիտ ըլլալու
էր կարծելու համար թէ այդ էֆէնտի ու
լըջութեան դէմքով ծածկուած վէպի կեանք
մը ապրող մարդն արդէն իր մտքի սալին
վրայ դարձնած չըլլար մեծագործ հատու-
ցում մը:

Ու չուզեց երկարել: Իրօք գէշ գաղա-
փար մը միայն ունէր իր մտածումներուն
մէջ սաղմնուող, որ բաւական ատենէ ի վեր
զինքը կը խոշտանգէր: Ու իրիկուն մը, սո-
վորականէն ուշ, մէկ կողմ առաւ ընկճուած
մարդուկն, անոր համար չահաւոր խնդրի
մը շուրջ խորհրդակցիլ պատրուակելով: Ու
Արաքսիի հայրը, որ երազին մէջ անգամ
Բարսեղ էֆէնտին այդչափ ուրախերես տե-
սած ըլլալը չէր յիշեր, փութաց անոր հե-
տեւիլ: Խեղճ մարդ, մտաբերե՞ց արդեօք
թէ այդ խորհրդակցութիւնը, որ իրեն ար-
տասովոր կը թուէր, և չա՛տ ալ իրաւամբ,
իր մէջ վատութիւն մը կը բովանդակէր:
Խեղճ հայր. խորհեցա՞ւ արդեօք թէ այդ
կոչն իրեն ըլլալէ աւելի՞ իր անմեղ աղջկան
թարմ կուսութեանը կը վերաբերէր: Ու ե-
թէ մտածեւ իսկ՝ ի՞նչ պիտի կրնար ընել

այս սնամէջ դանկով մարդը, որ բաղդին մէկ անխիղճ կատակովը, ընտանիքի հայր ըլլալու կոչումն ունէր իր վրան:

... Հիմա քանի մը տարիներ սահած անցած էին այն օրէն ի վեր, որ խեղճ հայրն իր աղջիկը ամուսնացուցած էր Բարսեղ էֆէնտիին հետ՝ այն փոխարինութեամբ որ իր ունեցած պահանջքն ալ անոր պիտի թողուր, ու անկէ ետք հանգիստ պիտի ապրեցնէր զանոնք: Գործադրեց՝ կամ ուզեց գործադրել: Սա՛ միայն յայտնի է որ երթալով աւելի՛ զժբաղդ եղան անոնք. աւելի՛ թշուառ: Ամուսնութենէն ետք միայն յայտնի եղաւ թէ ինքը սրտով չորցած մէկն էր: Իր գոհերուն հաշիւը չի կար: Ու հարստութեան համբաւը, զոր իրեն յանկարծակի երեւումէն կը գոյանար ու իր անուան չուրջ առասպելներ յերկրելու առիթը կուտար, գոյութիւն չունէր, գէթ հիմակ իր վերջին սպանդն ու համեմատաբար աւելի՛ թշուառն էր խեղճ Արաքսին, իր խռփած մարդու բոլոր զաւրելիութիւններուն վերջին ընդունարանը: Աղկաղկ արարած մը իրենց միութեան արդիւնքն էր եղած: Անմեղ էակ, իր հօրը անգունութիւնը ունէր զէմքին վրայ, ու իր մայրիկին անուշ, թրթռուն շրթները, որոնք թռչունի ճշոյն ունէին իրենց մէջ. — բոյնէն առկախ վարութան:

Իր վիշտերուն անթեղումին պահուն հանդիպած էր անոր փողոցին մէջ, ու պարզ ակնարկի մը փոխանակումէն հասկցած էին գիրար: Զգացած էին թէ ի՛նչ էր որ առիթը կուտար իրարու այդպէս նայիլ: Պարզ ակնարկ մը, ու ա՛լ ամէն ինչ լմացած էր: Իրենց սիրտերն ատով իսկ բարեկամ եղան իրարու, մտերիմ ըլլալէ առաջ, ինչ որ սահմանուած էր: Անկէ ետքն աւելի մօտենալու համար խօսակցութեան գիւրութիւն ստեղծեցին: Երիտասարդն իր կողմէն արգելիչ պատճառ մը չունէր որ պատուար կանգնէր իր առջին: Դժուարութիւնն Արաքսին կը վիճակէր, այն ալ ժամանակի մը համար, որովհետեւ Բարսեղ էֆէնտին, արդէն տկար, օր մը պարզ հարբուխի մը պատրուակով անկողին իյնալէ վերջ՝ ա՛լ զամուսնաց մնաց հոն: Պատուակա՛ն առիթ երկու սիրահարաց, որոնք իրենց շահատա-

կութիւններն ու աչկապուքի խաղը սկըսան: Ու Արաքսի, գրեթէ ամէն օր իրենց տան առանձին սենեակներէն միոյն մէջ գաղտնապէս կ'ընդունէր Սահակը:

Այդ պահուն եւս երիտասարդն իր քովէն նոր մեկնած, է՛ն ետքի բառը խնդրած էր իրմէն սիրոյ խօսքերուն, վերջին խոստումը, որ ա՛լ պիտի միացնէր գիրար մէկմէկու, աւելի՛ եռանդ, աւելի՛ սէր, աւելի՛ հրապոյր կեդրոնացնելով իրենց սիրոյ առանցքին վրայ: Ահա՛ այդ ետքի բառը, իր երջանկութիւնը թերեւս, դժուար կուգար իր դեռ ստեղծ, մեղանշելու անվարժ շըրթներէն արտաբերել: Ստեղ չէ՞ր ու մեղանշել ա՛լ այն երգումին դէմ, խոստումէ մը շատ աւելի արժող, զոր ըրեր էր Բարսեղ էֆէնտիին հետ միացման օրը: Ի՛նչ վրդովիչ մտածում: Սահակ երիտասարդ էր ու գեղեցիկ, Բոլորովին ներհակն էր ամուսինին: Ծեր էր ան, ու գերազանցապէս փճացած: Զէր կրնար իր յոյզերուն, իր վրդովումներուն յագուրդին սպասել եւ սիրուիլ յուսալ՝ այդ աղցաւորէն: Սիրած: Երբեք: Պարտականութեան բռնի մը հպատակ՝ կամակոր եղած էր անոր: Ի՛նչ մեծանձնութիւն: Խոստումի ու երդումի ճշտապէս կատարման ասկէ աւելի խնդախ օրինակ մը դժուար էր ցոյց տալ: Նշանախեց մը միայն անցած էր այդ խոստումի ու երդման անգիր էջէն՝ Սահակը սիրելով:

Գիտէր թէ իր երիտասարդութիւնը, այդ մարդուն իբրեւ սեփական ապրանք յանձնուած, օր մըն ալ առանց զգալու պիտի անհետանար: Գիտէր թէ ան իր համբաւեալ հարստութեամբ իրեն ոչինչ չէր աւելցուցած, հեւի՛ երջանկացնելէ: Գիտէր թէ ինքը պարզ գործիք մըն էր, կամ վերջինը անոր քրտնաճոյքին զոհերէն: Գիտէր բոլոր ասոնք: Կը զգար իր վիշտին խորութիւնը, ու զանիկա պարտքին գիտակցութեամբ կը ջանար ամփել: Իր երեւակայութեան առջեւ կը պատկերանար երիտասարդին խարտեաշ զլուխը. սիրուն դէմք մը, գրաւիչ աչքեր՝ որոնց խորը կը պզըտային ու կը դառնային չարունակ կապոյտ մանրիկ գոյգ աշխարհներ, ու վերջապէս կ'երեւակայէր անոր փափուկ շրթները՝ նուրբ պերեւեշտով ու բարակ աղուամաղով չըջանակուած: Ա՛, անոր չարժուծելը: Երիտասարդ էր Սահակ: Ու յանկարծ քովընտի

իր ամուսնին ճաղատ գանկը կը ցցուէր, ապաւեր, դօսացած աչքեր, լճացած դէմք մը: Ինչպէ՞ս սիրել: Սիրե՛լ...:

Երիտասարդէն սիրուելու ու գայն փոխադարձաբար սիրելու անդաճումը սակայն վայրկենարար կը փշրուէր ամուսնին հաւատարմութեանը դէմ դրժելու մտաբերումով: Ու երբ երիտասարդին ալ սիրոյն կեղծիքը կը մտաբերէր, ու անոր սառն տպաւորութիւնը իր սրտին մէջ գամուած կը զգար, ա՛ն ատեն կը կերպարանափոխուէ՛ր Արաքսին: Հաւատացած ըլլալու միամտութիւնը ծիծաղելի՛, ու նոյն իսկ պժգալի կը գտնէր անձանթ երիտասարդի մը խօսքերուն: Սիրտը տեղեա՞կ էր արդեօք ասարիանքի նոյն եռանդոտ բառերուն գորս շրթները կ'արտահոսէին հապշտապ: Երկու հակընդդէմ հոսանքներու միջեւ գտնելով իր սիրտը, յորդ մտածումներէն անկախ հանդոյցի մը շէր կարող հասնիլ: Նախընտրէ՛ր Սահակի սէրը: Բայց ի՛նչ կ'երաշխաւորէր ատոր անկեղծութեան: Մնա՛ր հաւատարիմ իր ամուսնին: Բայց ի՛նչ ընէր իր յոյզերն ու յուզումները: արբունքի տուայտանքին ցանկութիւնը տարեւորէ՞ մը սպասէր: Կռուանի մը կը ցանկար: Ուրե՞մի...:

... Հիմա գիշեր էր: Լիալուսինն իր անգայտ ճերմակով վերը, աստղացնցող կապոյտին մէջ իր շրջանը կը կատարէր յամբաշար թաւալումով: Աշխարհ, գիշերուան ստուերին մէջ թաղած իր բոլոր յոյզերը տենդոտ, ու յուզումներն յոգնաբեր, խորին լռութեամբ իր խաղաղ քունը կը քնանար: Եւ Արաքսի, վերջապէս պահուն իր զգացած վրդովանքը դեռ չարունակելով իր գանկին տակ, հիմա բազմոյցի մը վրայ տեղափոխուած՝ կը թոյլատրէր որ նոյն մտածումները շրջան բոլորեն, առանց սակայն փափաքուած վերջաւորութեան յանդերձ: Ու իր խոհանքը կը շեշտուէր գիշերին խորունկնալով: Գիշե՛ր, խոհա՛նք: Սենեկին մէջ՝ ճրագին աւելայծուն պլպլուքով՝ անկողնին մէջ անզգայ երկարող ամուսնին կիսադէմքն աւելի՛ տմբոյն երեւցաւ, աւելի՛ արդահատանքի կարօտ քան արհամարհանքի: Հոգին խռովելու վրայ էր երբ յոնկարծ պղտիկ ճշոց մը սպակից սենեակէն փրթելով, իր երազանքը վրդովեց: Ձաւա՛կն էր, իր հոգի՛ն, որ մայրիկը կը փնտռէր: պատրաստակամ վաղեց անոր սնարին մօտ: Եւ անոր անո՛ւշ, թրթռուն շրթանցը վրայ մայրական զորովի է՛ն տաք ու սիրալեզ համբոյրը զետեղելուն հետ երդուընցաւ վանել յետին մտաբերումը Սահակի անուան: Մ. ՅՈՎ. ՍԵՓԵԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԱԿՆԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[Շար. ԺԴ ԽԻՆՆԵՆ ՎԵՐՏ]

Հիմայի գացողներն եկեղեցի կուգան գիշերայն, իրենց հետ բերելով հարսն ալ: Պսակի արարողութիւնը ճիշտ Պոլսոյ մէջ եղածին պէս կը կատարուի. հոն սեղանին առջեւ հարս ու փեսայ դէմ առ դէմ կը կանգնին. աղօթքներէ վերջ, երկուքը կը միացնեն իրենց գլուխներ. փեսան իր աջ ոտքը հարսին ոտքին վրայ կը դնէ մինչեւ պսակի վերջը. հարս և փեսայ իրենց մատաններ՝ եթէ ունին՝ կը փոխանակեն ի նշան անքակտելի միութեան և համակամութեան: Պսակի պահուն կնքահայրը քառաթեւ մեծ խաչ մը կը բռնէ պսակուողներու գլխուն վրայ:

Պսակէն վերջ փեսային վրայ չուրջառ կուտան, և ձեռքն ալ Աւետարան մը, զոր կը համբուրեն բոլոր հանդիսատեսք և կը շնորհաւորեն պսակը: Փեսայի քոյրերը սիւսաւաւով շաքար կը բաշխեն ներկայ հանգիստականներուն. երբեմն նաև նուշ ընկոյզ, խնձոր, թութ ևլն:

Եւր ճշանվերացի արարողութիւնը կ'ուզեն յետաձգել, հարս ու փեսայ, կընքահայրն և ալ մերձաւոր ազգականք ձիու վրայ կը հեծնեն, հարսին վրայ կը ձգեն իր կարմիր ու ոսկեթել քողը ի նշան անձնուրութեան, և փեսային վրայ կուտան չուրջառ մը, և եկեղեցական երգեցողութեամբ կ'առաջնորդուին փեսային տունը: Այս թափփոխ մէջ ներելի չէ երկու ամուսնացողներուն գնացքը կտրել, որովհետեւ չարազուշակ կը համարուի հարսին ու փեսային մէջտեղէն անցնելը: Տան դրան առջեւ իրենց կ'սպասեն մանչուն ծնողքն ու ազգականները, որոնք այլևայլ սրտառու խօսքերով ու ժողովրդական երգերով կը փայփայեն իրենց հարսն ու դաւակը: Հարս ու փեսայ ձիու վրայ նստած կ'սպասեն զրան առջեւ. ազգականք ու բարեկամք իրենց շուրջ կը պարեն և կ'երգեն այսպէս:

Ժամէն կուգայ ջուխտ մը ֆիտան ,
 Իջնանք տեսնանք մե՞րը կուգան .
 Առնենք ելնենք վերի օտան :

Բարով եկիր դուն բարի արեւ ,
 Ծաթեցի՛ր դուն մեր տան վերեւ .
 Դուն ո՞ւր էիր , ո՞ւր իս գըտար ,
 Հէ՛յ , Ագամայ պաղլաւս մըտար :

Պիւլվիւլ եղար վարդիս դիմաց ,
 Քանի՛ անիմ աջօքս իմաց ,
 Ելի՛ր էկուր կամաց կամաց :

Առաւօտուն աս ի՞նչ չաղ է ,
 Հարսը պաղճան վարդ կը քաղէ .
 Նստեր ու շեաքէր կը քաղէ ,
 Շէքրին թողը ինք կու թաղէ :

Թագւորի մար դուն դուրս էկո՛ւր ,
 Քու թագւոր որդէկդ է էկեր ,
 Թէք է դացեր չիֆթ է էկեր ,
 Հետը կագուռ ձագ է բերեր :

Երկու կագուռ կային բունը ,
 Կը թափէր երեսուն գունը :
 Դուն ես մեր տան ոսկի սիւնը :

Թագւոր գովիմ գլխուդ ի վար ,
 Էռաջ ես քու պոյըդ ըսիմ ,
 Ուր կ'նմանի սեւիլի ծառ .
 Անկից ես քու երեսդ ըսեմ ,
 Ուր կ'նմանի լուսընկի կալ :

Այս շար-սարէն ու երգէն վերջ հարս ու
 փեսայ իրենց ձիերէն վար կ'իջնեն ու տուն
 կը մանեն : Կեսուրն ու իր աղջիկներ դրան
 վրայ ալ առած , ձեռք ձեռքի տուած կա-
 մար մը կաղմած են , որուն տակէն պիտի
 անցնի հարսը՝ հնազանդութիւն խոստանա-
 լով իր մեծերուն :

Հին ժամանակներու մէջ երբ հարսը
 դուռնէն ներս կը մտնէր , վրան կը ցանէին
 մանրուկ դրամներ , ուլունքներ և ցար (կո-
 ընկ) որմէ միացած է ժողովրդական բարե-
 մաղթութիւնը «Տարօսը գլուխդ գայ» : Վեր-
 ջապէս հարսը իր սենեակը կ'առաջնորդեն
 իրենց քաղցրանուագ երգերով :

Ազուոր քու հագածդ ալ է ,
 Ելի խալուն վրայ քալէ՛ ,
 Քալէ՛ , ու մանտրտիկ քալէ՛ ,
 Ալուկ փեւերդ վեր ծալէ՛ :

Տնեցւոյ ուրախութիւնն անսահման է :
 Երկու օր ամբողջ իրենց խնամի հրաւիրե-
 լոց հետ ժամանակ կ'անցընեն . կ'ուտեն ու
 կը խմեն , կ'երգեն ու կը պարեն : Ատոնց
 մէջ են հարսնեղբայրները , որոնք պսակի
 արարողութեան ատեն ընկերակցած էին
 հարսին և հսկած ու խնամած զայն, — որպէս
 զի ձիէն վար չիյնայ . — հոս է նաև հար-
 սընքոյրը՝ որ տարեւոր կին մ'է ընդհան-
 րապէս . սա կը խնամէ հարսը այս նոր տան
 մէջ , կը խրատէ ու երեք գիշեր հարսին ու
 փեսային սենեակը կը պառկի , մինչև առա-
 գաստի գիշերը :

Հարս ու փեսայ մէկ բարձի վրայ կը
 նստին : Պսակէն ետք , երբ աղջիկը իր սենե-
 ակը կ'առաջնորդուի , փեսային ազգական-
 ներէն մանչ տղեկ մը հարսին կրկնակօշիկը
 ոտքէն կը հանէ ու անոր մէջքին կը դարնէ ,
 մաղթելով որ ինն ամիսէն զաւակ մը ծնի :
 Հարսնեղբայրք , իրենց նորեկ հարսը մէջքերին
 առած , կը զուարճանան , ձկնթ իրարու տա-
 լով ու սեղմելով՝ կը խաղան : Հար-
 սին վրայ կը մնայ միշտ իր կարմիր քօղը :

Հանգիստակսնք և մերձաւոր ազգականք
 խաղցողներուն ճակատը «ոսկի դրամ» կը
 փակցնեն : Այս հարսանեկան խաղերուն ու
 պարերուն մէջ խոստապահանջ են մեր Ակնցի
 մամիկներն ու պապիկները . օտարներ ի-
 րարու հետ չեն կրնար խաղալ , մանաւանդ
 չամուսնացած աղջիկներն ու մանչերը :

Պսակի յաջորդ առաւօտուն երբ հարսն-
 եղբայրները իրենց պարդեւները ստանալով
 կը մեկնին , ընդհանրապէս անոնց ետեւէն
 կը գլորեն կաւէ տակառ մը կամ ջուրի կուժ
 մը :

* * *

Հարսը անխօս է . իր կենտրոն առջև չի
 կրնար խօսիլ , ջուր ալ չի խմեր : Երբեմն
 հաց ալ չուտեր եղեր , բայց հիմակ վեր-
 ցուած է այս չափազանց խոստովիւն :

Տեսէ՛ք , կեսուրը ի՞նչ խրատ կուտայ իր
 հարսին .

«Ականջդ յիս արէ՛, ի՛նչ ըսեմ ամուր
ծրարէ, ուր դան, ուր հազար ըսեն, հազ-
րէն մէկ խօսք լսէ, ըսէ՛, ան ալ չը գիտեմ
ըսէ, դուն քեզ չարէն ազատէ:»

Անխօսի դուրսիւնը շատ կարճ կը տեւէ
հիմա: Հարսնիքէն քանի մը ամիս ետք
կեսուրը կամ կեսայրը ոսկի նուէր մը տա-
լով, կ'արտօնեն իրենց հարսին խօսիլ, բայց
քիչ խօսիլ:

Պսակի երրորդ գիշերը սովորական ժա-
մէն առաջ հարսը կ'առաջնորդեն իր ա-
ռանձնասենեակը: Հարսնքոյրը նախապէս
խրատներն ու պատուէրները տուած կ'ըլ-
լայ: Բիշ վերջն ալ մանչը կ'առաջնորդուի
սենեակ և այլևս զիրար գտած են... եւ
առաքատի գիշերն է:

Յաջորդ առաւօտուն խոշորիկէլ ամանով
մը հրուշակ (հէլվա) կը պատրաստեն և ան-
միջապէս կը զրկեն աղջկան ծնողքին, ի-
րենց խնդակցութիւնն ու գոհունակութիւնը
յայտնելու և այսպէս աւետելու իրենց հար-
սին անառաքութիւնը:

* * *

Աղջկան ծնողքը իր դստեր օթիտ կու-
տայ քանի մը ձեռք զգեստ: Հարուստները
կուտան մինչեւ 10 ձեռք: Ակնայ կնոջական
զգեստներն արդէն ցոյց տուինք թէ
ինչե՛րէ կը բաղկանան: Այս օժիթը հարսնե-
ւորներու ներկայութեամբ կը բացուի. կըն-
քամայրն ամէն մէկ զգեստ կը ցուցնէ ու կը
գովէ, կ'օրհնէ հարսն ու «երջանկութեամբ
կտրտել» կը մաղթէ: Հիմա սակայն ան-
պատշաճ կը նկատեն օթիտը հանդիսաւորնե-
րուն առջեւ բանալ, և արդարեւ ի՛նչ չտեսու-
թիւն: Օթիտը կը զետեղուի մեծկակ սնտու-
կի մը մէջ ու կը զրկուի մանչուն տունը:

* * *

Հարսնիքէն մէկ երկու ամիս վերջ, աղ-
ջկան ծնողքն ընդհանուր հրաւէր մը
կուտան իրենց փեսային աղգականներուն,
որոնք երեկոյ մը ընդհանրապէս կ'այցելեն
իրենց խնամին, հոն կ'ընեն իրենց ընթ-
րիքը, այդ գիշերը հոն կը մնան եւ յաջորդ
առաւօտուն կը մեկնին թիթեւ ճաշ մ'ընելէ
վերջ:

Այս հացկերոյթին ատեն կը ծառայէ փե-

սան՝ իրր տան գաւակ. բայց անկէ վերջն ալ
զոքանչն, աներն ու քենիները կը գուրգու-
րան իր վրայ: Փեսան գաւառի մէջ տան
գաւակ մըն է:

Ակնայ մէջ սովորութիւն է 2-3 շաբա-
թը կամ ամիսը մէկ անգամ հրաւիրել փե-
սան ու աղջիկը. որոնք մինչեւ եօթնեակ մը
մնալու հրաման կ'ստանան իրենց մեծերէն:
Երբ փեսաներն ու աղջիկները կը հրաւիր-
ուին, նոր հարսնեառն մը կը դառնայ իրենց
ընտանեկան յարկը. անկեղծ ու սիրակաթ
խնդութիւն մըն է որ կը տիրէ տան ամբողջ
անդամներուն միջեւ: Այն մայրն ու քոյրեր՝
որոնք կուլային իրենց աղջկան ետեւէն՝
հիմակ կը ժպտին, ուրախ են, և արդէն
աղջիկը զայդ խոստացած էր իր մօր, և միւս-
թարած ըսելով:

Մի՛ լար, մարիկ, մի՛ լար, ես աչւայ տի գամ,
Ութն օրն ուր լմնայ ընկերովս տի գամ,
Տարին ուր լմնայ, զըրկովս տի գամ:

ՎԱՀԱՆ Գ. ՍԱՐԸՅԱՆ

Իր տունէն մեկնելուն, Պօղոս ծեր մու-
րացիանի մը կը հանդիպի՝ ձերմակ մօրու-
քով:

— Տասնո՛ց մը. եթէ կը հաճիք:

— Ի՛նչպէս. նորէ՞ն դուն ես, կ'ըսէ Պօ-
ղոս, նորէ՞ն թշուառութեան մէջ ես: Ար-
դէն տասնոց մը տուած եմ քեզի, տասնը-
հինգ օր կայ:

* * *

Մառկօշ հեռադրատուն մը երթալով նա-
մակ մը կը յանձնէ:

— Շատ կը կշռէ կոր, կ'ըսէ պաշտօնեան,
պէտք է տասնըհինգ սանթիմ ևս աւելցնէք:

— Անա՛նկ է ես, աւելի շատ կշռելու
համար:

* * *

— Համբիլ դիտե՞ս, աղջիկս, կը հարցնէ
հրաւիրեալներէն ծերունի մը:

— Այո՛, կը պատասխանէ տղան... Տե՛ս,
մէկ, երկու, երեք... Երեք ակռայ ունիս:
Հարցափորձեցէ՛ք տղաքները:

Արսօնաճիւղ. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԻՄ ՀԱՃՈՅՔՍ

Բ

Վաղ քաջ ընդ այգն, ընդ երեկոյն Հարցս Աստուծոյն ի Վեհարան,
Մեծահաւատ գնալ ուխտի, ի' լուր Սրբոց ու Սրբուհեաց,
Ոյց ջերմ բանիւք մակրդուած է անտիական մեր ճիւղ՝ ըղեղ,
Որոց հոգւով խմորուած են մեր հոգիներն աստուածատուր.
Ինչպէս անոնց սրտով մեր սիրտ պատուաստուած է մանկութենէն,
Ու մեր որրանն ու գերեզման՝ օրհնիւքն անոնց միշտ խնկաւէտ.
Որպէս մեր շուրթք անոնց երգոց հոգետաւիղ քնարներն են.
Խաչ մը հանել, պագնել քարն հոն՝ ուր նոր կոխեր, անցեր Աստուած,
Քարն՝ ոյր վերայ անյաղթահար հաստեց Յիսուս Եկեղեցին:
Քարն՝ որ դեր քան զամէն բուրգեր պիտի մնայ մշտնջենի:

Հոն Սրբութեան յարկին հանդէպ՝ նոր Քառաթեւ արձանանալ,
Ու ընկուղած խո'րքն հաւատքիս անճառներու թաքթաքուրքին,
Չուե՛լ, թո՛ի՛ վերացումի, հիացումի բաւիղքն ու գունտը.
Անհասկելոյն վարագուրին ետեւն ամպ մ'ինձ աթոռ դրած,
Շանթհարուելով վայր հոսելու չափ խելայեղ ու սարսափուն,
Դիտել արգանդն արարչութեան որ կը բացուի ու կը ծնի
Յաւիտեաններն ու անհունը, Անեղին չափ անըմբռնուն:
Խաւարակուռ անջրպետին մէջ սահարկէ լոյսն իր ովկէան.
Դան ու գնան յաւիտեաններ, մեր Մոլորակն ոստնու վհէն.
Կ'առնու ծնունդ և մարդկութիւնն ափ մը կաւէն աստուածաշունչ:

Քառասնորեայ այս պահոց մէջ՝ քառսուն մանկաց հաւատքովը
Դիտել Աղամն աղգաց, լեզուաց հայրն, հեղինակն աւանդական,
Տիեզերքին եզ բնակիչ՝ միանձնոյթէն խոնջ ընկողմած,
Որուն կողէն գողնայ Աստուած, չինէ՛ Նւան, մա՛յր գեղուհեաց.
Որքան հիացմամբ տիրանու կեանքը անոնց աղինական,
Նո՛յնքան սոսկմամբ ու զայրացմամբ դիտել անոնց շկողակը,
Կողկողաղին ու աղեխարշ դուրս վանստ ին իրենց դրախտէն.
Փուշն ու տատասկ կոխտակը, մե՛րկ ու նօթի ու ծարաւի՛,
Յան՝ իրենց հաց, արցունքը՝ ջուր, արտալածանքն՝ իրենց նոր կեանք:
Միահեծան Երկինք-Պետին անէծքն՝ իրենց զլխուն կարկուտ:

Դիտել Աստուածն՝ որ վիրապէն կամ թոհրոհէն Անճանօթի
Կ'որոտայ իւր պատգամքն օրէնք յաւիտեանին ու անհունին.
Յ'ակսն քթթել կ'արփաղարդի հաստատութիւնն անձայրածիր.
Դալարք դորգեն երկիրն, ու ծառք անտառին մէջ կանգնեն վրան:
Կայտառքն իրենց վտաններով լուղակ եռան դեռան ի ծով.
Կը բազմանան սերունդք մարդկան, որպէս աւազք՝ յափն ծովուց,
Ազգաց, աղանց կարաւաններն՝ նահապետ մը իրենց գլուխ,
Ենթալայէն յայտնեալ հաւատքն իրենց փարոս ու ոսկովիրայ,
Տեսնել աշխարհքն անոնց ոտքին տակ արտ ու կալ մինչ Դողգոթայ:
Դոշել անտի ճէլի՛ չլի՛ն թիցե՛ս ընդ իսնն՝ ի դրախտին:

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրուս

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ քննանկան ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը : Գնեցե՛ք մեկ մեկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը : 10 օրինակ մեկէն առնողին 30 առ 100 զեղչ : Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնօրեցութեան :

Գրատուն Մարգարեան

Հաստատել 1805ին

Պատիւ ունի ծանուցանել այն բոլոր կըրթական հաստատութեանց որք զործակալութեանց հետ ու է չափազանցական սլայմանագրութեաններ չեն կնքած . քչելոր համար անոնց գրքերը միայն, թէ պատրաստ է իրեն սեփական գիրքերը, որք մանկավարժական այժմու ընտրելագոյն ու դիւրուսոյց մեթոտներուն համաձայն պատրաստուած են, թղթատարի ծախքն իր վրայ ըլլալով՝ Պոլսոյ գնով շրջել ուր որ ալ ըլլայ : Յետագայ ցանկին մէջ նշանակուած են գրքատան սեփական դասագիրքերը, իրենց անունովն ու գնով :

Դործ . Ֆրանկոմոնրիւն Ֆրանս . լեզուի

Գին 7 Ղրուս .

Ո՛վ որ կը փափաքի հմտանալ ֆրանս . քերականութեան բոլոր նրբութիւններուն, կրնայ վստահաբար առնել Պոզանեան Ֆրանս . Ֆերականութիւնը, որ պատրաստուած է Հառուսի, Կէրատի, Լարիւլիէ Պաշէի քերականութեանց հետեւողութեամբ, և բազմապիսի հրահանգներով ճոխացած :

Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով : Կեդրոնատեղին է Հանրագիտակի Տնօրէնութեան քով :

Հետեւեալ գրքերուն համար դիմել միմիայն

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց, քիւ 57

ՆՈՐ ՈՃՈՎ ԳԱՍՏԱԼԱՆ ԳՐՔԵՐ

Մեծամասնակ միջ պատրաստ

ՄԱՆԿԱՆՑ ԳՐՔԵՐ ԿԱՄ ՀԱՐՊԻԿ ՖԵՐԱԿԱՆ, Պատկերագիր, բոլորին նոր ոճով : Հատը 5 փաշա :

ՄԱՐԳԱՐԵԱՆ, Մանկապարտէզի-Ծաղիկի մանուկներուն համար, կ'ուսուցանէ կարգաւ, գրել, գծել, կը բովանդակէ երգեր, բարեր, առակներ եւ հանելուկներ : Գին 50 փաշա :

ՍԻՐՈՒՆ ԶԲՈՍԱՐԱՆ, Մանկանց երկրորդ գիրքը, կը պատրաստէ մանկական երգեր, կարճ հատուածներ, առակներ, բարեր, յալիք փոքրիկ պատմութիւններ եւ առածներ : Թ. ապ. Գին 2 զրշ :

ՈՍԱՆՄԱՍԻՆԻԿ Հայ տղայոց, երրորդ գիրք ընթերցանութեան Ե. Տ. Գրքերով : 120 պատկերներով : կը բովանդակէ բարոյական ճիշդիկ պատմութիւններ, ստանալներ, երգեր, առակներ, կոշական ու գիտական ամենակարեւոր գիտելիքներ, եւն. Գիրք մը այժմիկ իւր անուան եւ պիտանի ամեն Հայ տղայ : Գին 4 զրշ :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՐԿԱՆ ՖԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերագրող ման Լ. Գին Լաթակազի 59 փաշա :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՐԿԱՆ ՖԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերագրող ման Բ. Կ'ուսուցանէ իր անձնին ոճով քերականութեան Ուրբ ՄԱՍՈՒՆՔ բանին 100 միջ եւ փոքր գեղեցիկ պատկերներով փոյ : Գին Լաթակազի 100 փաշա :

ՄՐՈՒԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հին եւ նոր կտակարարի, 100 փոյ : Գին Լաթակազի 100 փաշա :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՐԿԱՆ ՓՈՒԼԱՐԱՆՈՒԹԻՒՆ պատկերագրող, Մանկապարտէզի-Ծաղիկի տղայ. Գին 3 զրշ :

ՄԱՐԿԱՐԵԱՆ ԶԲՈՍԱՐԱՆ, առողջապահական եւ բժշկական, սրանց կանանց եւ փոքր տղայոց, առանց գործիքի. Գին 4 զրշ : ՀԱՅՆԻՆ ԼԵՋՈՒ ԿԱՄ ՎՊՐՈԹԻՒՆ գրքարարի, Բարեթիւ : Գին 4 զրշ :



ՌՕՍՒԱ. — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին փայ, Մախաւան հին սեղր

Ընդհ. Բննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒՋ

Ընդհ. Դործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԻՆ

Է Բ Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀԶՈՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՖՐԱՆԿ



1898ին՝ ԷԲԻԹԱՊԼ իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/₄ ՄԻԼԻՈՆ ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ ֆրանսական ՄԻԱՑԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷԲԻԹԱՊԼԻ չափ գործառնութիւն ունի

ԷԲԻԹԱՊԼԻ չափ պահեստի դրամ ունի

ԷԲԻԹԱՊԼԻ չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻԷՏ ընծայել ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւնը՝ որքան ԷԲԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՐԲ

Լոնտոն

Անգղիոյ պանքա

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրէտի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԹՈՒՐԳԻՈՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պահճէ Գաբու, Անանիատի Խան